# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2021 թվականի N: 314-Կ ք.Գյումրի

ԱԼՎԱՐԴ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Ալվարդ Մաթևոսյանի 2021 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հարթաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալվարդ Մաթևոսյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը՝ 13 աշխատանքային օր՝ 2021 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ:
2. Ալվարդ Մաթևոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հարթաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության մաթեմատիկայի ուսուցիչ Արմեն Էլբակյանին:

Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է